

ԱՄԵՐ. ԿԱՐԾԻՔՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻ ՄԱՍԻՆ

Հայրենիք (5 Յուլիս) կը գրէ. —

Հայ դատին նուիրած իր վերջին յօդուածին մէջ ամերիկահայութեան լաւագոյն բարեկամներէն Սփէնսեր Տ. Ըրվին, քանի մը ուշագրաւ արտայայտութիւններ ունէր, որոնք արժանի են մասնաւոր ուշադրութեան:

Այսպէս, օրինակ, մեր ամերիկացի բարեկամը հաւանական կը նկատէ, որ Խորհրդային ներկայացուցիչները միջազգային քոնֆերանսներու մէջ իրենք չպիտի յարուցանեն Տարտանէլի և մանաւանդ Թուրքիոյ արեւելեան նահանգներու խնդիրները, այլ իրենց գործողութիւններով պիտի ստիպեն պետութիւնները զբաղելու այդ խնդիրներով: Թէեւ, անոր կարծիքով, հիւլէական ու ռաքէթ ռումբերու այս դարուն մէջ հակակշիռը նեղուցներու կամ հողային փոքրիկ յաւելեալ շրջաններու վրայ չի կրնար փնտռուած ապահովութիւնը տալ, ինչպէս որ Խ. կառավարութիւնը կ'ուզէ ստանալ արանալով Տարտանէլին և Թրքահայ նահանգներուն, բայց Սփենսեր Տ. Ըրվին այսուհանդերձ միանգամայն արդար կը նկատէ Հայերու հողային պահանջը:

Ոչ նուազ ուշագրաւ է մեր ամերիկացի բարեկամին հետեւեալ հատուածը. —

«Բոլոր Հայերը, որոնք առաջին համաշխարհային պատերազմէն յետոյ աւելի խաղալիք դարձան պետութեանց ձեռքին քան ուէ ժողովուրդ Եւրոպայի մէջ երկրորդ համաշխարհային պատերազմի տեսն, կը ձգտին միացնել իրենց հայրենիքը: Անոնցմէ շատեր շատ ալ գոհ չեն իրենց դիրքէն Խորհրդային Միութեան մէջ, հակառակ իրենց տրուած մշակութային ինքնավարութեան: Անոնք իբր ժողովուրդ, կրցան կենդանի մնալ բռնապետական լուծի տակ այնքան երկար ժամանակ, որ բնական է որ պահէին անկախ պետութիւն մը կազմելու իրենց բնածին ձգտումը: Եւ եթէ անոնք չկրնան հասնիլ այդ նպատակին այս սերունդի օրով, պիտի ձգտին ատոր յաջորդ կամ նոյնիսկ հետեւեալ սերունդներու օրով: Այսպէս է անոնց ձգտումներու յարատեւութիւնը: Բայց մինչ այդ՝ ամէն միջոց, որ կրնայ միացնել պատմական Հայաստանը, կ'արդարացնէ իրենց մտքին մէջ եղած նպատակը»:

Սփենսեր Տ. Ըրվին կ'ընդունի թէ Արեւմտեան պետութիւնները կրնան լաւ հիմեր ունենալ ընդդիմանալու Խոսիոյ ընդարձակման շատ մը շրջաններու մէջ, բայց անոնք չեն կրնար լուրջ առարկութիւններ ընել Հայերու հողային պահանջին դէմ: Եւ ատիկա հետեւեալ պատճառներով. —

ա) Թրքահայաստանի մէջ շատ քիչ կայ կամ բնաւ չկայ կայսերապաշտական ռազմավարութեան խնդիր, ինչպէս որ կայ Իրանի կամ Պալքաններու մէջ:

բ) Թուրքիայ, հակառակ իր տուած դաշնագրային խոստումներուն, վերջին պատերազմին մէջ չօգնեց Դաշնակիցներու յաղթանակին:

գ) Բարոյական ծանր պարտականութիւն մը կ'իյնայ Դաշնակիցներուն վրայ լուծելու Հայկական հարցը, քանի որ առաջին համաշխարհային պատերազմի տեսն և յետոյ անոնք խոստացան Թրքական լուծէն ազատել Հայոց պատմական բոլոր հողերը:

Ահա թէ ինչու մեր ամերիկացի բարեկամը միանգամայն արդար և անհրաժեշտ կը նկատէ, որ Հայաստանին տրուին ոչ միայն կարսն ու Արտահանը, այլեւ Թուրքիոյ տիրապետութեան տակ այժմ գտնուող էրզրումը, Պիթլիսը, Վանն ու Տրապիզոնը, մինչեւ Ուիլսոնի գծած սահմանը: